

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«Օրբելի» վերլուծական կենտրոն, ավագ մասնագետ
Էլ. փոստ՝ shanna.vardanyan@gmail.com
DOI: 10.56813/2953-786X-2023.3-180
ԻՍՐԱՅԵԼԱ-ԱԴՐԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ
ԱՇԽԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆ-ԱԴՐԵԶԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Ներածություն

Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ Ադրեզանի և Իրանի հալամական Հանրապետության հարաբերությունները երբեք էլ հարթ չեն ընթացել: Պայմանավորված մի շարք գործոններով՝ այս երկու երկրների միջև կա փոխադարձ խորը անվստահություն: Այդ գործոններից մեկը Խարայել-Ադրեզան ռազմաքաղաքական սերտ համագործակցությունն ու Թեհրանի մտավախությունն է առ այն, որ Խարայելը կարող է Ադրեզանի տարածքն օգտագործել Իրանի դեմ: Սա Իրան-Ադրեզան հարաբերություններում առանցքային խնդիրներից է դարձել հատկապես 2000-ականների վերջից՝ Բաքու-Թել Ավիվ համագործակցության նոր մակարդակի բարձրացմամբ: Իրանի համար Ադրեզան-Խարայել խորացող հարաբերությունները պարունակում են հետևյալ հիմնական սպառնալիքները.

- Խարայելից գենքի գնումներ, որոնք կարող են օգտագործվել նաև Իրանի դեմ,
- Ադրեզանի տարածքի օգտագործմամբ Իրանին լրտեսում, ահաբեկչական ու դիվերսիոն գործողությունների կազմակերպում,

- Աղրբեջանի տարածքի օգտագործմամբ Իրանի դեմ լայնածավալ ռազմական գործողությունների իրականացում:

Իրանի այս մտահոգությունները հիմնավորվել են տարբեր տարիներին իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացված գործողություններում Բաքվի որոշակի ներգրավվածությամբ: Իսրայել-Աղրբեջան խորացող հարաբերությունների առնչությամբ Իրանը միշտ բարձրաձայնել է իր մտահոգությունները՝ թեհրան-Բաքր հարաբերություններում լարված շրջափուկերի ընթացքում՝ հաճախ շեշտելով այդ հարաբերությունների վրա Թել Ավիվի բացասական դերակատարումը: Այս կերպ, Իրան-Աղրբեջան հարաբերություններում իսրայելի գործոնի ակտիվացումը պայմանականորեն կարելի է ներկայացնել երկու շրջափուկով՝ առաջին փուլը 2000-ականների վերջից 2010-ականների սկիզբ, երկրորդը՝ 2020թ. Արցախյան պատերազմից հետո:

Լարվածությունը 2010-ականներին

Անկախացումից հետո Աղրբեջանի հարաբերությունները իսրայելի հետ զարգացել են բավականին ռացիոնալ և փոխշահավետ հունով: Բաքվի համար Թել Ավիվը մի կողմից ադրբեջանական նավթի ու գազի խոշոր գնորդ է, մյուս կողմից՝ ժամանակակից զինատեսակների մատակարար: Իսրայելի հետ հարաբերություններն Աղրբեջանը կարևորում է նաև ԱՄՆ-ում հրեական լրբի աջակցությունը ստանալու տեսանկյունից: Էներգետիկ ու ռազմական համագործակցության հնարավորությունները նոյնքան կարևոր են նաև Թել Ավիվի համար¹⁶⁶:

¹⁶⁶ A. Murinson, The Ties Between Israel and Azerbaijan, The Begin-Sadat Center for Strategic studies, 2014, p. 11.

Իսրայելի դեպքում Աղրբեջանի հետ հարաբերությունների խորացումը առանցքային նշանակություն ունի նաև Իրանին մոտ գտնվելու համատեքստում: Իր հարևանությամբ՝ Լիբանանում՝ «Հեղողական», և Սիրիայում՝ աշխարհազորային ուժերի տեսրով Իրանի ներկայության, ինչպես նաև Իսլամական Հանրապետության միջուկային սպառնալիքի չեզոքացումը հարայելը դիտարկում է որպես իր արտաքինքանականության գերխնդիրներից մեկը, որի լուծմանն ուղղված քայլերից է Իրանի հարևանությամբ, այդ թվում՝ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայի երկրներում իր ներկայությունը ապահովելը: Այս տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունների հաստատումը նաև հարայելի՝ մուսուլմանական երկրների հետ համագործակցության զարգացման քաղաքականության շարունակությունն է¹⁶⁷:

Իրան-Աղրբեջան հարաբերությունների վրա հարայելական գործոնի ազդեցությունը հատկապես շոշափելի է դարձել 2000-ականների կեսերից՝ թե՛լ Ավիվ-Բարու հարաբերությունների խորացմանը զուգահեռ: Այս ժամանակահատվածում երկու երկրները նավթի և գազի մատակարարման ոլորտում խոշոր պայմանագրեր են ստորագրել¹⁶⁸: Տնտեսականի հիմքի վրա Աղրբեջանը և հարայելը զարգացրել են նաև ռազմական խորը

¹⁶⁷ A. Israyelyan, The Israeli factor in Iran-Azerbaijan relations (2005-2013), Bulletin, The Institute of Oriental Studies, Volume XXXIV, Issue 1, Yerevan 2021, p. 145:

¹⁶⁸ Ա. Գրիգորյան, Իսրայել-Աղրբեջան փոխհարաբերությունների շուրջ, Նորավանք հիմնադրամ, 06.07.2009, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=717, հասանելի է 01.08.2023:

համագործակցություն¹⁶⁹, որի ոլորտային բազմազանությունը շատ լայն է: Միայն 2008-2011 թթ. Իսրայելից ադրբեջանական գնումների թվում են եղել.

- հետախուզական ու հարվածային ԱԹՍ-ներ,
- հակատանկային հրթիռներ,
- համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր,
- ականանետային համակարգեր
- զրահապատ մեքենաներ և այլն¹⁷⁰.

Նշված ժամանակահատվածում Իսրայելն ու Ադրբեջանը համագործակցություն են զարգացրել նաև կիբեռանվտանգության, ադրբեջանցի զինծառայողների վերապատրաստման, ադրբեջանական բանակի տանկերի արդիականցման ոլորտներում⁷¹: 2010-ական թթ. սկզբին Իսրայելն Ադրբեջանին է վաճառել նաև մի քանի տեսակի ռազմանավեր արտադրելու տեխնոլոգիաներ, որոնցով հենց Ադրբեջանում հավաքվել են իսրայելական մշակման ռազմանավեր¹⁷²: 2011 թ. Ադրբեջանում բացվել է նաև

¹⁶⁹Ստորևով խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի տվյալներով՝ 2016-2020 թվականներին Ադրբեջանի սպառազինության գնումների 69 տոկոսը իսրայելից է եղել: Sipri.org, 21.05.2023, <https://www.sipri.org/commentary/topical-backgrounder/2021/arms-transfers-conflict-zones-case-nagorno-karabakh>, հասանելի է 01.08.2023:

¹⁷⁰Կ. Վերանյան, Ադրբեջան-Իսրայել ռազմատեխնիկական համագործակցության շուրջ, Նորավանք հիմնադրամ, 31.08.2016, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14940, հասանելի է 01.08.2023:

¹⁷¹Նոյն տեղում:

¹⁷²Центр анализа мировой торговли оружием, База данных по мировому импорту вооружений и военной техники 2000-2021, Москва, 2019, с. 638:

գործարան¹⁷³, որը զբաղվում է իսրայելական «Aerostar», «Orbiter» տեսակի անօդաչու թռչող սարքերի հավաքմամբ¹⁷⁴:

Այս ամենն արդեն բավական էր, որպեսզի Իրանը կասկածանքով վերաբերվեր հարևան Երկրին, բայց իսրայելի հետ Ադրբեջանի մյուս գործարքն ավելի լուրջ մտահոգության առիթ տվեց Իրանին: 2012-ին Ադրբեջանն ու Իսրայելը կնքում են 1,4 մլրդ դոլար (շրջանառվում է նաև 1,6 մլրդ դոլար տարրերակը¹⁷⁵) արժողությամբ ռազմատեխնիկական գնումների մասին համաձայնագիր¹⁷⁶: Այս պայմանագրով Ադրբեջանին են վաճառվել տարրեր տեսակի ԱԹՍ-ներ, ռադիոտեղորոշման համակարգեր, հականավային հրթիռային համակարգեր, այլ ռազմածովային սպառագինություն:

Գործարքի առնչությամբ 2012-ի փետրվարին Իրանի ԱԳՆ է իրավիրվել Ադրբեջանի դեսպանը: Նա իրանական կողմին հավաստիացրել է, որ այդ սպառագինությունը ուղղված է ոչ թե Իրանի դեմ, այլ նախատեսված է Արցախյան հակամարտության համար¹⁷⁷: Թեև Իսրայելից իր գնումներն Ադրբեջանը մշտապես արդարացրել է Արցախյան

¹⁷³ Президент Азербайджана принял участие в открытии ряда предприятий оборононной промышленности, 04.03.2011,

<http://news.day.az/politics/256090.html>, հասանելի է 01.08.2023:

¹⁷⁴ Վ. Մխոյան, Տ. Հովհաննիսյան, Ադրբեջանի ԶՈՒ անօդաչու թռչող սարքերի պարկը, Ռազմաքաղաքական հանդես - Ադրբեջան, «Զորակն» գիտակրթական հիմնադրամ, Երևան 2018, էջ 99, 102:

¹⁷⁵ Israel signs \$1.6 Billion Arms Deal with Azerbaijan, Haaretz.com, 26.02.2012, <http://www.haaretz.com/israel-news/israel-signs-1-6-billion-arms-deal-with-azerbaijan-1.414916>, հասանելի է 02.08.2023:

¹⁷⁶ Israel to sell weapons to Azerbaijan, Times of Israel, 26.02.2012, <http://www.timesofisrael.com/israel-to-sell-weapons-to-azerbaijan/>, հասանելի է 02.08.2023:

¹⁷⁷ وزارتخارجه به سفير آذربایجان هشدار Tabnak.ir, 29.02.2012, <https://www.tabnak.ir/fa/news/230028/>, հասանելի է 02.08.2023:

հակամարտությամբ, սակայն առնվազն ուազմածովային սպառագինության գնումը չէր կարող տեղափոխվել այդ տրամաբանության շրջանակներում: Ուազմածովային նշանակության սպառագինությունն Ադրբեյջանը կարող է օգտագործել Կասափից ծովում, որտեղ Բաքուն նավթի հանքավայրերի շահագործման խնդիրներ ու հակասություններ ունի հատկապես Թեհրանի հետ:

Այս փուլում Իրանի համար Իսրայելից ուազմական գնումներն ու Բաքու-Թել Ավիվ հարաբերությունների սերտացումը մտահոգիչ էր հատկապես Թեհրանի շուրջ ստեղծված միջազգային իրադրության համատեքստում: Միջուկային ծրագրով պայմանավորված՝ 2010-ականների սկիզբն Իրանի համար նշանավորվեց ՄԱԿ, ԵՄ պատժամիջոցներով: Իրանի շուրջ իրադրությունն այնքան լարված էր, որ Իսլամական Հանրապետությանը ուազմական հարվածներ հասցնելու վտանգ կար, իսկ նման սցենարի դեպքում Ադրբեյջանը դիտարկվում էր որպես Իրանի դեմ հնարավոր հարթակներից մեկը: Պատահական չէ, որ այդ ֆոնին լուրեր շրջանառվեցին, որ Բաքուն Իրանի հետ սահմանին ավիաբազաներ է տրամադրել Իսրայելին¹⁷⁸: Թեև Բաքուն հերթեց այս լուրերը, սակայն իրանական կողմի մտահոգությունները չփարատվեցին, իսկ ավիաբազաների տրամադրման հավանականության մասին ՀՀՄ-ները շարունակեցին գրել նաև հետագայում՝ ընդհուար մինչև այսօր:

Այդ ժամանակաշրջանում՝ 2011 թվականին, գաղտնի փաստաթյարի հրապարակմամբ հայտնի «Վիքիլիկս» կայքը հանրայնացնում է Ադրբեյջանում ԱՄՆ դեսպանատան

¹⁷⁸ Azerbaijan Granted Israel Access to Air Bases on Iran Border, Haaretz.com, 29.03.2012, <https://www.haaretz.com/2012-03-29/ty-article/azerbaijan-granted-israel-access-to-air-bases-on-iran-border/0000017f-e5ec-df2c-a1ff-ffffd52a00000>, հասանելի է 01.08.2023:

Ժամանակավոր հավատարմարար Դոնալդ Լուի՝ 2009-ի հունվարի 13-ին Վաշինգտոնին հղած «Ադրբեջանի երկերեսանի խրայելական քաղաքականությունը» նամակը: Նամակում մասնավորապես նշվել է, որ Ադրբեջանը և Խրայելը Իրանը դիտարկում են որպես անվտանգային սպառնալիք: Հավատարմատարը նաև մեջբերել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ խրայելա-ադրբեջանական հարաբերությունները բնութագրող խոսքերը: «Սա ընդամենը այսբերգի երևացող մասն է, մնացած մասերը տեսանելի չեն»¹⁷⁹:

Խրայելի ու Ադրբեջանի համագործակցության ավելի խորքային բնույթը փաստեցին նաև հետագա զարգացումները: Մասնավորապես, երբ 2010-2012 թվականներին խրայելյան գործակալների կողմից Իրանում սպանվեցին մի քանի ֆիզիկոս-գիտնականներ: Սպանությունները (և մեկ չստացված փորձը) իրականացնող խմբին Իրանը բացահայտեց և նրանց հարցաքննություններից պարզեց, որ գործակալներն աշխատել են Խրայելի հատուկ ծառայություններից «Մոսսադի» համար, իսկ պատրաստություն անցել են Խրայելի ռազմաքաներից մեկում, ինչպես նաև մի շարք Եվրոպական, ոչ Եվրոպական երկրներում, Իրանի հարևան երկրներում:

Մեղադրյալների մեջ հայտնվեց նաև Ադրբեջանը: Թեհրանը Բաքվին պաշտոնապես մեղադրեց «Մոսսադի» հետ համագործակցության և Իրանի դեմ կատարվող խրայելական դիվերսիային անուղղակի մասնակցության մեջ: Այդ պատճառով Իրանում Ադրբեջանի դեսպանին

¹⁷⁹ WikiLeaks Azerbaijans discreet symbiosis with Israel, wikileaks.org, https://wikileaks.org/plusd/cables/09BAKU20_a.html, հասանելի է 01.08.2023:

Իրավիրեցին Իրանի ԱԳՆ և պահանջեցին կանխել Աղբբեջանի տարածքից հսկամական Հանրապետության դեմ Իսրայելի հետախուզական ծառայության գործունեությունը¹⁸⁰: Միայն 2012 թ. փետրվար ամսվա ընթացքում Թեհրանում Աղբբեջանի ռեսպանը երկու անգամ Իրանի ԱԳՆ է իրավիրվում՝ Իսրայելի հետ Աղբբեջանի համագործակցության շուրջ պարզաբանումներ տալու: Այս ֆոնին 2012 թ. մարտին Թեհրան է մեկնում նաև Աղբբեջանի ՊՆ ղեկավարը՝ ԻԻՀ-ին հավաստացիանելու, որ Աղբբեջանն Իրանի դեմ որևէ թշնամական քայլ չի ձեռնարկի¹⁸¹: Սա որոշակիորեն թուլացնում, բայց չի վերացնում լարվածությունը:

Կարծես այս ամենն ամբողջացնելով՝ Իրանի Մեջլիսի հետազոտությունների կենտրոնի 2013 թ. գեկուցում նշվել է, որ ԻԻՀ-ն Հարավային Կովկասում ունի հիմնական դերակատարում և շահեր, այդ առումով մեծ դեր ունեն աղբբեջանական և հայկական ուղղությունները, որտեղ Իրանը և՝ ազդում է, և՝ ազդվում: Բաքվի մասով գեկուցում ուղիղ նշվել է աղբբեջանական կողմի հանդեպ առկա անվստահությունն ու անհանգստությունը:

«Բաքվի հետ հարաբերությունները վերջին տարիներին ավելի սառն են դարձել, իսկ մյուս կողմից Արևմուղիքի, ՆԱՏՕ-ի, ԱՄՆ-ի և Իսրայելի հետ Աղբբեջանի խորացող կապերը Իրանի և նրա ռազմական կառուցների համար զգոնության կոչ են: Իրանը, ըմբռնելով

¹⁸⁰ احصار سفير آذربایجان به وزارت خارجه Dolat.ir, 11.02.2012, <https://dolat.ir/detail/211642>, հասանելի է 01.08.2023:

¹⁸¹ Азербайджан не станет площадкой для нанесения ударов по Ирану, заверил министр обороны Азербайджана, Eurasianet.org, 13.03.2012, <https://russian.eurasianet.org/node/59226#>, հասանելի է 01.08.2023:

Աղրբեջանի շարժման ուղղությունը, պեսք է կանխադրեսի հնարավոր դարրերակները, պարտասր լինի ցանկացած սցենարի և ամենաբարձր մակարդակով պաշտպանի հրանի ազգային շահերն ու անվտանգությունը», - ընդգծել է զեկույցի հեղինակ Սաջադ Թալեբին¹⁸²:

Չնայած Թեհրանի նկատառումներին ու գգուշացումներին՝ Աղրբեջանն իրանի դեմ գործողություններում աչքի է ընկել նաև հետազայում: Մասնավորապես 2014 թվականին իրանի հսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հայտարարեց, որ Նաթանզի միջուկային օբյեկտի մոտ իսրայելական արտադրության «Hermes-450» ԱԹՍ են խցել: Ենթադրվում էր, որ ԱԹՍ-ն Աղրբեջանի տարածքից էր օդ բարձրացել, և չնայած Բաքուն հերքեց¹⁸³ դա, իրանական կողմը հետագայում էլ շարունակեց պնդել որ ԱԹՍ-ն իրանում էր հայտնվել Աղրբեջանի տարածքից:

«Երբ շուրջ երկու դարի առաջ Աղրբեջանից իսրայելական անօդաչու եկավ իրանի դարածք, մենք նրանց բռնորդի նորա հղեցինք և գգուշացրինք, որ դա իսրայելի ձեռքի գործն է. իսրայելցիները նրանց հետախուզական ապարագում ազդեցություն են գտել: Բայց այդ ժամանակ Աղրբեջանի նախագահի համար դժվար էր դա ընդունել: Երբ ես անձամբ գնացի և գոուցեցի նրանց հետ, մեկ դարի անց

¹⁸² روابط جمهوری اسلامی ایران و جمهوری آذربایجان؛ چالشها و فرصت ها 25.06.2013, <http://rc.majlis.ir/fa/news/show/847265>, հասանելի է 01.08.2023:

¹⁸³ Hermes-450 drone downed in Iran not used by Azerbaijani armed forces, Trend.az, 27.08.2014, <https://en.trend.az/azerbaijan/politics/2305916.html>, հասանելի է 01.08.2023:

պարզվեց, որ Աղրբեջանում իսրայելական լրտեսական ցանց կա», - 2016 թվականին հայտարարել էր Իրանի պաշտպանության նախարար Հոսեյն Ղեհղանը¹⁸⁴:

Իրանին, ըստ Էռլյան, չի հաջողվել, կազմաքանդել ենթադրյալ այդ ցանցը, քանի որ հետագայում ևս Աղրբեջանի անունը շոշափվեց իսրայելի հակաիրանական գործողություններում: Մասնավորապես 2018 թվականին իսրայելի վարչապետը Բենյամին Նեթանյահուն հայտարարեց, որ իրենց հատուկ ծառայությունները թերանից հափշտակել են կես տոննա տպագիր ու Էլեկտրոնային փաստաթղթեր, որոնք ապացուցում են, որ Իրանը շարունակում է իր միջուկային ծրագիր¹⁸⁵: Արաբական «Al-Jarida» լրատվակայքը տեղեկություններ տարածեց, ըստ որոնց՝ այդ ամբողջ արխիվը իսրայելական հատուկ ծառայությունները տեղափոխել են Աղրբեջանի տարածքով. իբր իսրայելցինները փաստաթղթերն Իրան-Աղրբեջան սահմանով անցկացրել են գաղտագողի՝ առանց աղրբեջանցի սահմանապահների իմացության, իսկ հետո էլ այդ ամենն իսրայել են տեղափոխել օդանավով, առանց Բաքվի իշխանությունների գիտության¹⁸⁶: Աղրբեջանը շտապեց հերթել դա: Պաշտոնական Բաքվում հայտարարեց, թե իրենք ստուգումներ են արել ու վստահությամբ կարող են

¹⁸⁴ Министр обороны Ирана о России, Сирии, Турции, Азербайджане и Израиле, Iran.ru, 28.12.2016, <https://www.iran.ru/news/analytcs/104040/Ministr oborony Irana o Rossii Si rii Turcii Azerbaydzhane i Izraile>, հասանելի է 01.08.2023:

רַחֲנִינָה מְגֻדְלָה בְּצִדְקוֹתָה עַל בְּנֵי הָרָעָן עַמִּיְּרָאֵן, Youtube.com, 30.04.2018, <https://www.youtube.com/watch?v=qBt4tSCALA>, :հասանելի է 01.08.2023

¹⁸⁶ شاحنة صغيرة أخرجت «أدلة نتنياهو» من قلب طهران, Al-Jarida, 03.05.2023,<https://www.aljarida.com/articles/1525285879421497900>, 01.08.2023:

հայտարարել, որ դա ապատեղեկատվություն է: Եվ նորից չնայած հերքումներին՝ տարիներ անց էլ իրանից շարունակեցին խոսել այդ մասին¹⁸⁷:

Ընթացիկ փուլը՝ Արցախի պատերազմից հետո

Աղբեջանում հսրայելի ներկայության շուրջ իրանի մտահոգություններն ավելացան 2020 թվականի Արցախյան պատերազմի օրերին: Այստեղ իրանն անհանգստանալու մի քանի դրդապատճառ ուներ: Նախ իրանն այն միակ երկիրն է, որը սահմանակցում էր Հայաստանին, Արցախին ու Աղբեջանին, հետևաբար ռազմական գործողություններն ընթանում էին անմիջապես իրանի հարևանությամբ, և հայամական Հանրապետության սահմանակից շրջանների համար վտանգ էին ներկայացնում: Պատերազմի ընթացքում բազմաթիվ իրթիռներ ու արկեր են հայտնվել իրանական կողմում պատճառելով նյութական վնասներ:

Սրանից բացի՝ իրանի տարածքում էին հայտնվում իսրայելական արտադրության անօդաչու թռչող սարքեր, որոնք, ամենայն հավանականությամբ, խոցվել են հենց իրանի զինուժի կողմից: Իր տարածքում ԱՇՍ-ների, իրթիռների հայտնվելու առնչությամբ թերանը բազմից նախազգուշացումներ է ուղղել կողմերին:

ԻհՀ-ն նաև զգուշանում էր, որ իսրայելը կարող է օգտվել իրավիճակից ու իրանի դեմ գործողություններ ձեռնարկել: Սրանք այս խնդիրներից էին, որոնց պատճառով

¹⁸⁷ پوپاد اسرائیلی از طریق آذربایجان وارد ایران شده بود / سرقت اسناد هسته‌ای هم کار آنها بود Azariha, 03.10.2021, https://t.me/ir_Azariha/13275, հասանելի է 01.08.2023:

Թեհրանը անկեղծորեն ցանկանում էր պատերազմի դադարեցում¹⁸⁸:

Պատերազմի ավարտով, սակայն, Իրանի մտահոգությունները չվերացան, այլ՝ ընդհակառակը: Եթե Բաքվում աղբբեջանցիներն իրենց հաղթանակը տոնում էին՝ Իսրայելի ու Թուրքիայի դրոշը պարզելով, իրանական ԶԼՄ-ներում ու սոցցանցերում մի հարցադրում առաջ քաշեցին՝ արդյո՞ք Իրանը սահմանակից դարձավ Իսրայելին¹⁸⁹: Իրանական վերլուծական դաշտն իսլամական Հանրապետությանը ներկայացրեց որպես պատերազմում պարտված կողմերից մեկը, և դա բացատրվում էր նրանով, որ նոր ծևակորված աշխարհագրությունն Իրանի համար լուրջ սպառնալիքներ է պարունակում, և որպես պատերազմի վերջնարդյունք՝ Աղբբեջանում իրենց ներկայությունն են ամրապնդել Իսրայելն ու Թուրքիան, իսկ իսլամական Հանրապետությունն իր հերթին դուրս է մնացել Հարավային Կովկասից¹⁹⁰:

Աղբբեջան-Իսրայել համագործակցության ամրապնդումն ավելի նշանավորվեց, եթե Իսրայելը եղավ այն առաջին երկրներից մեկը, որին Արցախի օկուպացված, Իրանին սահմանակից տարածքներում շինարարական նախագծեր վստահվեցին: Մասնավորապես Իսրայելը պետք է մասնակցեր Կովսականում (Զանգիլան) «խելացի գյուղի» կառուցման աշխատանքներին: Սա ԻԻՀ-ում ընկալեցին

¹⁸⁸ Ժ. Վարդանյան, Իրանի դիրքորոշումը Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում և հետո, Արևելագիտության հարցեր, հասոր 22, Երևան 2022, էջ 186:

¹⁸⁹ آیا ایران با اسرائیل هم مرز شده؟, Eslahatnews, 13.11.2022, <https://t.me/Eslahatnews/72497>, հասանելի է 01.08.2023:

¹⁹⁰ قرایغ، ملاحظاتی چند, جنگ دوم قرایغ, Irdiplomacy.ir, 30.06.2021, <http://www.irdiplomacy.ir/fa/news/2003672/>, հասանելի է 01.08.2023:

որպես Իրանի մոտ գտնվելու և, «խելացի գյուղ» կառուցելու անվան տակ, Իրանին լրտեսելու փորձ¹⁹¹:

Իրանն իր հերթին ամենատարբեր մակարդակներով պատրաստակամություն հայտնեց մասնակցել շինարարական աշխատանքներին, բայց շուրջ երկու տարվա ջանքերից հետո ընդամենը հայտարարվեց, որ Զրականում (Զաբրայիլ) Թեհրանը հիվանդանոց ու դպրոց է կառուցելու¹⁹², ինչը, հավանաբար, դեռ վերջնական չէ:

Արցախյան պատերազմից հետո Իրանի համար գլխավոր անհանգստությունն, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» նախագիծն է, որն իսլամական Հանրապետությունում դիտարկում են որպես հայ-իրանական սահմանը վերացնելու, Իրանին տարածաշրջանից դուրս մղելու փորձ, ու համարում են, որ նախագծի շահագրգիռ կողմերից մեկը հենց Խորայելն է¹⁹³: Այս առումով Հայաստանի սահմանների վրա ադրբեջանական հերթական հարձակումների ժամանակ Իրանում ևս ուշադրության են արժանացրել այն հանգամանքը, որ Խորայելից Ադրբեջան գենքի մատակարարումները շարունակվում են մեծ տեմպերով¹⁹⁴: Նաև դրանից ելնելով՝ Թեհրանն Խորայելին համարում է

191 اسرائیل با پوشش ایجاد "روستاهای هوشمند" در جمهوری آذربایجان بدنبل حضور امنیتی در مزr سفیر آذربایجان در ایران: کریدور زنگزور منجر به قطع دسترسی مرزی ایران و ارمنستان نمی شود

192 Avadiplomatic.com, 15.10.2022, https://avadiplomatic.com/ali_alizadeh/, հասանելի է 01.08.2023:

193 کریدور نخجوان, نشست آستانه و عصباتیت سفير اسرائیل از تبریز Entekhab.ir, 25.07.2022, <https://www.entekhab.ir/fa/news/687257/>, հասանելի է 01.08.2023:

194 اذربایجان به دنبال جنگ است Irdiplomacy.ir, <http://www.irdiplomacy.ir/fa/news/2015010/>, 04.10.2022, հասանելի է 01.08.2023:

თარადაგრვანის լარვაბილების ჩრდილო ჩრდილო ჩრდილო ჩრდილო
ერაկათარი მცენა¹⁹⁵:

Այս պատճառով է նաև, որ 2021 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին, երբ Բաքվի և Թեհրանի հարաբերությունները խստ լարվել էին, իրանից հնչում էին հայտարարություններ իր սահմանի հարևանությամբ երրորդ երկրների՝ մասնավորապես Իսրայելի ներկայության անթույլատրեհիւթյան մասին¹⁹⁶: Եվ իենց այդ ընթացքում էր, որ իրանի բարձրաստիճան զինվորականները հայտարարեցին, որ Իսրայելն Աղրբեջանի սահմանների մոտ ներկայություն ունի և լրտեսում է Իրանին, սակայն նրանց բազաների թվի մասին ստուգ տեղեկություն չկա¹⁹⁷:

Իրանի զինված ուժերը նաև զորավարժություն անցկացրին Ադրբեջանի սահմաններին՝ շեշտելով, որ այն ուղերձ է Իրավելին¹⁹⁸: Արդեն լարվածության թուղարմանը զուգահեռ՝ Իրանից հայտարարեցին, որ Բաքուն իրենց տվել է անհրաժեշտ հավաստիացումները¹⁹⁹: Չնայած դրան Իրանը չդադարեց խստել Իրավել-Ադրբեջան հարաբերությունների՝ իր համար անընդունելի լինելու մասին և ադրբեջանական կողմի հետ հետագա գրեթե բոլոր հանդիպումներին

۱۹۶ آذربایجان به ایران توصیه، Isna.ir, 18.10.2021,
<https://www.isna.ir/news/1400072618271/>, hwwuwñþh t 01.08.2023:

۱۹۷ Mehrnews.com, 08.10.2021, <https://www.mehrnews.com/news/5322478/>, հսանվել է 01.08.2023:

بیانیه نمایندگان در حمایت از رزمایش صلح و فاتحان خبیر در مراتعهای شمال غرب / هشدار به ۱۹۸ Tasnimnews.com, 03.10.2021, <https://www.tasnimnews.com/fa/news/1400/07/11/2583182/>, hwsuwntjھ ٤ 06.08.2023:

Isna.ir، آماده‌ایم تا زمان رسیدن به نتیجه در وین بمانیم / با امریکا مذاکره غیر مستقیم داریم ۱۹۹ 27.12.2021، <https://www.isna.ir/news/1400100603975/>، hwsuwñtjh ፳ 01.08.2023:

շարունակեց ընդգծել, որ իրանը զգայուն է հսրայելի ներկայության նկատմամբ²⁰⁰:

Նոյն կերպ, 2022 թ. աշնանից սկսված և 2023 թվականին շարունակված իրան-Ադրբեջան հարաբերություններում հերթական լարվածությունը ևս իրանում գլխավորապես մեկնաբանվեց որպես հսրայելի ազդեցության հետևանք: Թեհրանում ընդգծում էին, որ Բաքու-Շեհրան հարաբերություններն հսրայելի նման թշնամիներ ունեն, որոնք միայն օգտվում են իրավիճակից և ավելի լարում իրանի ու Ադրբեջանի հարաբերությունները²⁰¹: Այս համատեքստում հատկանշական է, որ Բաքու-Շեհրան հարաբերությունների լարման ընթացքում իսրայելական կողմը քարոզական մեծ աջակցություն է ցուցաբերել Բաքվին՝ ընդգծելով «իրանական սպառնալիքին» դիմակայելու հարցում Ադրբեջանին սատարելու անհրաժեշտությունը²⁰²:

Երկու երկրների միջև լարվածության գագաթնակետը 2023 թվականի մարտին իսրայելում Ադրբեջանի դեսպանատան բացումն ու այնտեղ հնչեցված հայտարարություններն էին: Ադրբեջանի պաշտոնակցի հետ մամուլի ասովիսի ժամանակ իսրայելի ԱԳ նախարարը հայտարարեց, որ իրանը սպառնալիք է երկու երկրների

200 تأکید بر افزایش سطح همکاری همجانبه ایران و جمهوری آذربایجان Mehrnews.com, 04.07.2022, <https://www.mehrnews.com/news/5530822/>, հասանելի է 01.08.2023:

201 ارشد نظامی ارتش: جمهوری آذربایجان را پاره տն խود ճանաւութե և սեր Հայրդی մی گنیم Farsnews.ir, 09.04.2023, <https://www.farsnews.ir/azarbaijan-gharbi/news/14020120000004/>, հասանելի է 01.08.2023:

202 Why Israel should help Azerbaijan in the face of the Iranian threat, Israelhayom.com, 09.07.2023, <https://www.israelhayom.com/2023/07/09/why-israel-should-help-azerbaijan-in-the-face-of-the-iranian-threat/>, հասանելի է 06.08.2023:

համար, և որ պայմանավորվել են Իրանի դեմ միասնական ճակատ ստեղծել: Աղրբեջանի ԱԳՆախարարն էլ ընդգծեց, որ Թել Ավիվի ու Բաքվի հարաբերությունները ռազմավարական համագործակցության նոր փուլ են թևակոխում՝²⁰³:

Իրանից այս հայտարարությունների առնչությամբ բացատրություն պահանջեցին Բաքվից: Իրանի ԱԳՆ խոսնակ Նասեր Քանանին իսրայելցի պաշտոնյայի հայտարարությունն անվանեց «Աղրբեջանի տարածքն Իրանի ազգային անվտանգության համար սպառնալիքի վերածելու սիոնիստական ռեժիմի չար մտադրությունների հերթական ապացույց»: Իսրայելի հետ ռազմավարական համագործակցության նոր փուլի մասին Աղրբեջանի արտգործնախարարի հայտարարությունն էլ Քանանին անվանել էր «այդ երկուների համագործակցության հակահրանական ուղղվածության անուղղակի հաստատում»²⁰⁴:

Եվ թեև 2023 թվականի հուլիսին Իրանի արտգործնախարարի հետ հանդիպմանն Աղրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ Աղրբեջանը երբեք թույլ չի տա, որ իր տարածքից Իրանի ու տարածաշրջանի դեմ սպառնալիք լինի²⁰⁵, դա, միևնույն է, հսկամական Հանրապետությունում թերահավատորեն

²⁰³ Israel's Eli Cohen hosts Azerbaijani FM ahead of historic embassy opening, i24news.tv, 29.03.2023, <https://www.i24news.tv/en/news/israel/diplomacy/1680086328-israel-s-fm-hosts-azerbaijani-counterpart-ahead-of-historic-embassy-opening>, հասանելի է 01.08.2023:

²⁰⁴ کنوانی: مقامات آذربایجان توضیح دهد, Isna.ir, 31.03.2023, <https://www.isna.ir/news/140201104231/>, հասանելի է 01.08.2023: 205 بیدار و گفتگوی دکتر امیرعبداللهیان با الهام علیف رئیس جمهوری آذربایجان 05.07.2023, <https://mfa.ir/portal/NewsView/724144>, հասանելի է 01.08.2023:

ընդունեցին²⁰⁶: Պատճառն այն է, որ դեսպանատան բացմամբ Բաքու-Թել Ավիվ հարաբերությունները, իսկապես, թևակոփեցին նոր՝ ավելի բացահայտ փուլ, ինչը չի կարող չմտահոգել ԻԻՀ-ին:

Ավելին, Ադրբեջանում Իսրայելի ներկայությունը Թեհրանին անհանգստացնում է նաև Իրանում անջատողականությանն աջակցելու տեսանկյունից: Իսրայելը Իրանի մասնատմամբ շահագրգիռ կողմերից մեկն է, և պարբերաբեր հանդես է գալիս այսպես կոչված «Հարավային» և «Հյուսիսային Ադրբեջանները» միավորելու օգտին²⁰⁷: Իսրայելի այս քաղաքականության վառ դրսնորումներից մեկը 2022 թ. Բաքվում Իսրայելի դեսպանի կողմից թափրիզը որպես ադրբեջանական քաղաք ներկայացնելու քայլն էր, ինչը դեսպանն արեց ադրբեջանցի հեղինակի «Թափրիզ քաղաքի հեթիաթները» գիրքը գովազդելով²⁰⁸: Այս ուղղությամբ հեթթական աղմկալից միջադեպը 2023-ին էր, երբ Իսրայելի խորհրդարանի 32 պատգամավոր ստորագրել էին «Հարավային Ադրբեջանի» ստեղծման օգտին²⁰⁹:

²⁰⁶ V. Kaleji, The Israel Factor as a ‘Third Party’ in Growing Tensions Between Iran and Azerbaijan, Jamestown.org, 08.05.2023, <https://jamestown.org/program/tehran-worried-about-israel-factor-in-growing-tensions-between-iran-and-azerbaijan/>, հասանելի է 06.08.2023:

²⁰⁷ Iran and the problematic partition of Azerbaijan , israelhayom, 05.31.2022, <https://www.israelhayom.com/2022/05/31/iran-and-the-problematic-partition-of-azerbaijan/>, հասանելի է՝ 01.08.2023:

²⁰⁸ G. Deek: I’m learning so much about Azerbaijani history and culture in Tabriz, Twitter.com, 20.07.2022, <https://twitter.com/GeorgeDeek/status/1549774617061036034>, հասանելի է՝ 01.08.2023:

²⁰⁹ Knesset deputies supported activists of South Azerbaijan, Turan.az, 30.04.2023,

Իրանում նաև հսրայելի հետ հարաբերությունների ընդլայնմամբ են պայմանավորում Ադրբեջանում շիա հավատացյալների նկատմամբ ճնշումները, որոնք նոր թափ էին առել Արցախում պատերազմից հետո՝ Բաքու-Շեիրան լարվածության ֆոնին: Իսլամական Հանրապետության հանդեպ անթաքուց համակրանք տածող շիա հավատացյալներն Ադրբեջանում հակահսրայելական տրամադրություններ գեներացնող հիմնական ուժն են²¹⁰, որոնց հրանը փորձում է օգտագործել Ադրբեջանում ազդեցություն ունենալու, հսրայելի հետ Բաքվի կապերի խորացումը կանխելու համար: Բայց այս համայնքի ցանկացած ակտիվություն արժանանում է Բաքվի իշխանությունների կոշտ արձագանքին, և հրանի հետ հարաբերությունների սրման դեպքում Ադրբեջանում առաջինը հենց նրանք են թիրախում հայտնվում:

Իրանում էլ Ադրբեջանի այդ քաղաքականությունը համարում են պատերազմի ժամանակ Բաքվին թել Ավիվի ցուցաբերած աջակցությունը փոխհատուցելու միջոց²¹¹: Պատահական չէ, որ 2022 թ. հունիսին, Ադրբեջանում հավատացյալների ճնշումների նոր ալիքի ֆոնին, Թավրիզում Ադրբեջանի հյուպատոսարանի²¹² և Թեհրանում

https://www.turan.az/ext/news/2023/4/free/politics_news/en/4014.htm, հասանելի է՝ 01.08.2023:

²¹⁰ «Смерть Израилю!»: В Азербайджане задержаны 30 участников антиеврейских акций, panorama.am, 24.06.2017, <https://shorturl.at/NSV45>, , հասանելի է 06.08.2023:

²¹¹ تاثیر صهیونیسم بر نظام مند شدن اسلام ستیزی در جمهوری آذربایجان Qafqaz.ir, 14.07.2022, <https://bit.ly/3DxDxVF>, հասանելի է 01.08.2023:

²¹² تجمع اعتراضی مردم و دانشجویان انقلابی استان‌های آذربایجان شرقی و غربی در مقابل کنسولگری تصاویر Arannews.com, 13.07.2022, <http://fa.arannews.com/news/69403/>, հասանելի է 01.08.202:

դեսպանատան²¹³ մոտ ցոյցեր անցկացվեցին, որոնց ժամանակ հնջեցին նաև հակասրայելական կարգախոսներ:

Այս կերպ հրանին անհանգստացնում են նաև Աղրբեջանի թալիշարնակ շրջաններում հսրայելի ակտիվությունը, այդ շրջաններ հսրայելի տարբեր պաշտոնյաների այցերը²¹⁴: Սրանք ավանադաբար հրանի ազդեցության գոտում գտնվող շրջաններում և հրանին հեղինակություն համարող բնակչության շերտերի մոտ հրանի ազդեցությունը չեղոքացնելու քայլեր են համարվում:

Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ վերջին երեք տարիների ընթացքում հրանն էլ ավելի զգայուն է դարձել հսրայել-Աղրբեջան հարաբերությունների խորացման նկատմամբ: Այդ մասին հրանը բարձրածայնել է ամենատարբեր մակարդակներով՝ միաժամանակ սպառնալով, որ ցանկացած երկիր, որի տարածքն հսրայելի կողմից կօգտագործվի ընդդեմ հրանի, նույնպես կարժանանա հրանի պատասխան հարվածին:

«Սիրնիստական ռեժիմը հեռու է մեր երկրից,
և նրանց ինքնաթիռները պեղը է օդում
լիցքավորվեն, սա այդ ինքնաթիռները
թիրախավորելու լավագույն
հնարավորությունն է: Նրանք կործում են նաև
օգրագործել մեր շրջակա երկրների
բազաները: Այդ երկրները բռնել են
իսլամական աշխարհին դավաճանության
ուղին՝ իրենց հարաբերությունները
կարգավորելով սիրնիստական ռեժիմի հետ,

²¹³ تجمع اعتراضی دانشجویان مقابل سفارت جمهوری آذربایجان Farsnews.ir, 15.07.2022, <https://www.farsnews.ir/news/14010325000783/>, հասանելի է 01.08.2023:

²¹⁴ دلایل نزدیکی رژیم صهیونیستی به تالش‌های آذربایجان Qafqaz.ir, 12.12.2021, <https://bit.ly/3QykTiX>, հասանելի է 01.08.2023:

չիմանալով, որ այդ հարցը ներառված է Իրանի ռազմավարությունում: Իրանի բանակի բոլոր հրամանադրաները դա գիտեն, փորձարկել են զորավարժությունների ընթացքում, և ինսպիրուցիոնալացվել է այն դոկտրինը, որ եթե աշխարհի որևէ երկրի ռազմական հենակերպ օգտագործվի Իրանի հայամական Հանրապետության դեմ հարձակվելու համար, ապա այդ հենակերպերը ևս ծանր հարձակման կենթարկվեն», - 2023 թ. փետրվարին հայտարարել էր Իրանի ԶՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Բաղերին²¹⁵:

Այս համատեքստում ուշագրավ է, որ երբ 2022 թ. մարտին Իրանի ԻՀՊԿ-ն հրթիռային հարվածներ հասցրեց Իրաքյան Քրդստանի Էրբիլ քաղաքում «Մոսսադի» Ենթադրյալ օբյեկտներին, իրանական մեդիադաշտում դա որպես Աղրբեջանին զգուշացնելու առիթ օգտագործեցին: Մասնավորապես, իրանական սոցցանցերում տարածվեցին տեսանյութեր, որտեղ պատկերվել էին, թե ինչպիսին կարող է լինել Աղրբեջանի իսրայելական օբյեկտների վրա Իրանի հնարավոր հարձակումը²¹⁶:

Միաժամանակ, սակայն, չնայած իրանական կողմից Բաքվին հասցեագրված ուղղակի և անուղղակի նախազգուշացումներին ու սպառնալիքներին, գործնականում Իրանը շարունակում է Աղրբեջանին դիտարկել որպես երկրի, որտեղ կարող է մշակութային, կրոնական ընդհանրությունների շնորհիվ անհրաժեշտ

²¹⁵ ساخت پایگاه‌های امن نظامی تداوم خواهد داشت, Isna.ir, 07.02.2023, <https://www.isna.ir/news/1401111814122/>, հասանելի է 06.07.2023:

²¹⁶ احتمال حمله ایران به جمهوری آذربایجان, Youtube.com, 31.08.2022, <https://www.youtube.com/watch?v=JUjIIQyXxOI> հասանելի է 06.08.2023:

ազդեցությունն ապահովել ու խորացնել համագործակցությունը²¹⁷: Սա է պատճառը, որ անգամ Ադրբեյջանի հետ 2020 թ. հետո առաջացած լարվածությունների ընթացքում Իրանից շատ ավելի զուսակ հայտարարություններով էին հանդես գալիս ու կոչ անում շարժվել հարաբերությունների բարելավման ուղղությամբ²¹⁸:

Իրանը փորձում է Ադրբեյջանին մոտ պահելու քաղաքականությամբ և նրա հետ բազմաշերտ համագործակցության զարգացմամբ չեզոքացնել իսրայելական սպառնալիքը: Թեհրանի ջանքերը, սակայն, չեն տվել ցանկալի արդյունքը: 2020 թ. Արցախում պատերազմից հետո Ադրբեյջանն իր հակաիրանական գործողություններում, ինչպիսին է օրինակ «Հարավային Ադրբեյջանի» թեզի ակտիվացումը, Իրանի պետական համակարգի դեմ քարոզչությունը²¹⁹, դարձել է ավելի անկաշկանդ: Վերջինս վառ դրսուրում է նաև Իսրայելում դեսպանատան բացումը: Եթե նախկինում Ադրբեյջանը խուսափում էր այս քայլից մուտքմանական աշխարհի, այդ թվում՝ Իրանի արձագանքից զգուշանալով, ապա արարական մի շարք երկրների ու Իսրայելի հարաբերությունների կարգավորման և Իրան-Ադրբեյջան հարաբերությունների լարման ֆոնին Բաքուն թել Ավիվում

پاداشت ولایتی درباره مسائل اخیر بین ایران و جمهوری آذربایجان: من هم یک آذری هستم²¹⁷
Tasnimnews.com,
<https://www.tasnimnews.com/fa/news/1401/08/29/2806107/>, հասանելի է 06.08.2023:

²¹⁸ سفر رئیس جمهور به سوریه انجام خواهد شد, Irna.ir, 02.05.2023,
<https://www.irna.ir/news/85097998/>, հասանելի է 06.08.2023:

²¹⁹ "İrandaki aksiyalar nəticəsində Güney Azərbaycan müstəqil ola bilər" - RƏY, Report.az, 04.11.2023, <https://report.az/xarici-siyaset/irandaki-aksiyalar-neticesinde-guney-azerbaycan-musteqil-ola-biler-rey/>, հասանելի է 06.08.2023:

դեսպանատուն բացելու որոշում կայացրեց: Սա նաև <<Կապան քաղաքում Իրանի հյուպատոսության բացմանն ուղղված պատասխան էր Ադրբեջանի կողմից:

Եզրակացություն

Իսրայել-Ադրբեջան բազմակողմ
համագործարկցությունն անժխտելիորեն իր հետքն է թողել
Բաքվի և Թեհրանի խնդրահարույց հարաբերությունների
վրա՝ նաև դառնալով դրանցում լարվածության աճի
պատճառ: Այս առումով Իրանի հսլամական
Հանրապետությունը մշտապես զգայունություն է դրսերել
այդ երկու երկրների հարաբերությունների նկատմամբ՝
դրանց խորացումը համարելով ազգային անվտանգության
սպառնալիք:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա
իսրայելական գործոնն իր ազդեցությունն է թողել Բաքու-Թել
Ավիվ հարաբերությունների զարգացմանը համընթաց, և,
չնայած ադրբեջանական կողմի մշտական
հավաստիացումներին, Իրանում շարունակում են
կասկածամտությամբ վերաբերվել Իսրայել-Ադրբեջան
համագործակցությանը, որը 2020 թ. Արցախում
պատերազմից հետո նոր փուլ է թևակրիսել: Ադրբեջանցի
պաշտոնյաների հետ հանդիպումներում Իրանի
իշխանությունները հիշեցնում են, որ իրենք զգայուն են այդ
հարցի նկատմամբ, տարածաշրջանում Իսրայելի
ներկայությունն անընդունելի են համարում ընդհուպ մինչև
հրթիռակոծմամբ սպառնում:

Իսրայելական սպառնալիքը չեզոքացնելու համար
Իրանը փորձում է զարգացնել Ադրբեջանի հետ
հարաբերությունները, ինչպես նաև օգտագործել Ադրբեջանի
շիա հավատացյալների ներուժը: Իրանական կողմի

հակազդեցությունը, սակայն, չի կատեցնում Բաքվի ու Թել Ավիվի սերտացումը: Իսրայել-Ադրբեյջան հարաբերությունների զարգացման ընթացիկ տեմպի պահպանման դեպքում այս գործոնը շարունակելու է ազդել Իրանի ու Ադրբեյջանի հարաբերությունների վրա՝ մնալով դրանցում առկա խորքային խնդիրներից մեկը:

ZHANNA VARDANYAN
"Orbeli" analytical center, senior specialist
E-mail: shanna.vardanyan@gmail.com

THE IMPACT OF ISRAEL-AZERBAIJAN COOPERATION ON IRAN-AZERBAIJAN RELATIONS

Since the collapse of the Soviet Union, the relations between newly independent Azerbaijan and the Islamic Republic of Iran have remained contentious. One of the key factors contributing to this tension is the close military-political cooperation between Israel and Azerbaijan, which has raised concerns in Iran that Israel might use Azerbaijan's territory against it. These concerns have been further exacerbated after the 2020 Artsakh war, which marked a new phase in the relationship between Tel Aviv and Baku. Iran perceives the strengthening of Israel's presence in the region as an attempt to encircle Iran and sees Israel as one of the primary supporters of the so-called "Zangezur Corridor".